https://doi.org/10.46991/S&L/2023.95.076

ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՀԱՅՑԻ ՏԱՐՐԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ[1]

Մերի Խաչատրյան
ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ

Առաջին հայացքից քրեաիրավական որոշ տարրեր պարունակող և հանցավոր գործունեության հետ առնչություն ունեցող գույքի՝ առանց մեղադրական դատավճռի բռնագանձման ինստիտուտը առաջին հերթին հետապնդում է հանրային շահի պաշտպանության նպատակ և ուղղված է հանցագործության կատարման արդյունքում կամ կատարման նպատակով ձեռք բերված գույքի իրավական կարգավիճակի հստակեցմանն ու օրինական շրջանառություն բերելուն: Հաշվի առնելով որոշ երկրներում քաղաքացիական դատավարության կարգով քննվող գույքի դեմ (in rem) բռնագանձման վարույթների արդյունավետությունը[2], ազգային օրենսդրությամբ նախատեսվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի՝ քաղաքացիական դատավարության կարգով քննությունը:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջը, պարունակելով գույքի դեմ (in rem) հայցին բնորոշ տարրեր, ուղղված է դատարանին՝ որոշելու գույքի իրավական կարգավիճակը, այն է՝ ճանաչելու ապօրինի ծագում ունեցող գույքի նկատմամբ պետության սեփականության իրավունքը:

Թեև գույքի բռնագանձման պահանջը, որպես կանոն, ենթադրում է պատասխանողին որոշակի գործողություն կատարելուն հարկադրելուն ուղղված պահանջ, ինչը բնորոշ է կատարողական (վճռող) հայցերին, սակայն կարծում ենք, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջը իր բնույթով ճանաչողական հայց է: Այսինքն՝ պաշտպանվող սուբյեկտիվ իրավունքը հանգում է ոչ թե պատասխանողին որոշակի գործողություն կատարելուն պարտավորեցնելուն, իսկ չկատարման դեպքում՝ պահանջը հարկադիր կատարելուն, այլ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի վիճելիությունը վերացնելուն, գույքի իրավական կարգավիճակը որոշելուն և որպես արդյունք՝ վիճելի գույքի նկատմամբ հայցվորի իրավունքը ճանաչելուն:

Իհարկե ՀՀ իրավական համակարգում ներդրված ինստիտուտը մասամբ շեղվել է գույքի դեմ (in rem) հայցի տրամաբանությունից. այսպես, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի[3] (այսուհետ՝ Օրենք) 20-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման անհնարինության դեպքում հայցի ներկայացման պահի դրությամբ ապօրինի ծագում ունեցող գույքի շուկայական արժեքի չափով գումարի բռնագանձման հնարավորությունը, ինչը նշանակում է, որ անձին կարող է առաջադրվել գումարի բռնագանձման տեսքով դրամային պարտավորություն: Նման պարագայում ոչ թե ապօ-

[1] Սույն հոդվածը զեկուցվել է 2022թ. դեկտեմբերի 8-ի ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների գիտական նստաշրջանին:

[2] Տե՛ս Commission Staff Working Document Impact Assessment, Accompanying the document Proposal for a Regulation of the European Parliament and of the Council on the mutual recognition of freezing and confiscation orders, Brussels, 21.12.2016, էջ 26:

[3] Տե՛ս «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք, ընդունված 16. 04. 2020թ., ՀՀՊՏ 2020.05.13/50(1605):

րինի գույքի նկատմամբ ճանաչվում է պետության սեփականության իրավունքը, այլ ապօրինի գույք ունենալու (ունեցած լինելու) փաստը Օրենքը դիտարկում է որպես պետության նկատմամբ դրամային պարտավորության ծագման հիմք, ինչը բնորոշ է անձի դեմ ներկայացվող (in personam) հայցերին: Այնուամենայնիվ, ապօրինի ծագում ունեցող գույքի փոխարեն համարժեք գումար բռնագանձելու պահանջը ածանցվում է հիմնական պահանջից և կարող է բավարարվել միայն այն դեպքում, երբ առաջին՝ գույքի ապօրինի ծագումը դատական կարգով հաստատվել է, և երկրորդ՝ գույքի դեմ (in rem) հայցի ներկայացումը հնարավոր չէ (բարեխիղճ ձեռք բերողին գույքի փոխանցում, գույքի նույնականացման, առանձնացման անհնարինություն):

Ճանաչողական հայցերի առանձնահատկություններով պայմանավորված՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի տարրերը իրենց միասնության մեջ տարբերակված դրսևորում ունեն, ինչի պարզումը առանցքային նշանակություն ունի տվյալ վարույթներով ներկայացված պահանջների քննության սահմանները, ծավալը որոշելու, ինչպես նաև հայցը անհատականացնելու համար:

Իրավաբանական գրականության մեջ հայցի տարրերը բնորոշվում են որպես հայցի բաղկացուցիչ մասեր, որոնք կանխորոշում են հայցի բովանդակությունը և անհատականացնում են ներկայացված պահանջը[1]: Հայցի հիմքը այն փաստական հանգամանքներն են, որոնց հետ հայցվորը կապում է պատասխանողի նկատմամբ իր պահանջի իրավունքը[2], և որոնցով հիմնավորվում է հայցվորի նյութաիրավական պահանջը[3]: Տնօրինչականության սկզբունքից ելնելով՝ հայցվորը ինքն է որոշում իր կողմից ներկայացվող նյութաիրավական պահանջը հիմնավորող փաստերի շրջանակը, որոնք հարուցված գործի քննության պայմաններում դատարանի կողմից քննության առարկա են դարձվում, և որի հիման վրա դատարանը, հաշվի առնելով նաև վիճելի նյութական իրավահարաբերությունների բնույթը, որոշում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի շրջանակը:

Հայցի առարկան այն նյութաիրավական պահանջն է, որը բովանդակում է իրավունքի խախտումը կամ վիճարկումը վերացնելու և այդ իրավունքը վերականգնելու մասին պատասխանողին ուղղված հայցվորի պահանջը[4]:

ՀՀ վճռաբեկ դատարանը իր նախադեպային որոշումներում անդրադարձել է հայցի տարրերի բնորոշմանը՝ հայցի հիմքը և հայցի առարկան դիտարկելով որպես հայցը անհատականացնող միջոցներ[5]: Հարկ ենք համարում ընդգծել, որ հայցի անհատականացման գործնական նշանակությունը պայմանավորված է իրավական որոշակիության սկզբունքի ապահովման անհրաժեշտությամբ՝ բացառելու համար նույն կողմերի միջև նույն պահանջի առարկայով և փաստական հիմքերով հայցադիմումները կրկին վարույթ ընդունելու հնարավորությունը:

Հայցի իրավական հիմքը, այսինքն՝ վիճելի իրավահարաբերությունը կարգավորող իրավական նորմերը, ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշմամբ դիտարկվել է որպես հայցի ինքնուրույն տարր[6]: Սակայն գտնում ենք, որ ճանաչողական հայցերի իրավական հիմքը հայցի ինքնուրույն տարր դիտարկվելու դեպքում չի կարող ծա-

---

[1] Տե՛ս **Добровольский А.А.,** Основные проблемы исковой формы защиты права. - М., 1995., էջ 39:

[2] Տե՛ս **Гурвич М.А.,** Право на иск, М., 2001, էջ 10:

[3] Տե՛ս թիվ ԵՇՂ/0473/02/10 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը:

[4] Տե՛ս Гражданский процесс, Учебник. Под. Ред. М. К. Треушникова, М., 2006, էջ 227-229:

[5] Տե՛ս թիվ ԵԱՔՂ/1107/02/16 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 08.01.2019 թվականի որոշումը:

[6] Տե՛ս թիվ ԵՇՂ/0473/02/10 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը:

ռայել որպես հայցի անհատականացման միջոց, ինչը դրսևորվում է նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի դեպքում:

Այսպես, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի փաստական հիմքը, այն է՝ գույքի ապօրինի ծագում ունենալը հավաստող փաստական տվյալները, դատարանում հիմնավորվելու դեպքում գույքը դիտարկվում է Օրենքի իմաստով ապօրինի ծագում ունեցող և բռնագանձվում է հօգուտ պետության: Որպես օրինակ՝ դատարանը որոշում է կայացնում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ, երբ դատարանը հանգում է հետևության, որ այդպիսի գույքի շուկայական արժեքը հայցի ներկայացման պահին գերազանցում է 50 միլիոն ՀՀ դրամը: Այսինքն՝ հայցի իրավական հիմքը կանխորոշում է Օրենքի իմաստով գույքի՝ ապօրինի ծագում ունենալը հավաստվելու դեպքում այդ գույքը հօգուտ պետության բռնագանձման ենթակա լինելը, իսկ հայցի փաստական հիմքը այն հանգամանքներն են, որոնց առկայության դեպքում հավաստվում է գույքի ապօրինի ծագումը, այն է՝ վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառելի իրավական նորմերի ընտրությունը: Ուստի հետևում է, որ գույքի ապօրինի ծագումը հիմնավորող փաստական հանգամանքների առկայության իրավական հետևանքը այդպիսի գույքը հօգուտ պետության բռնագանձելն է, հետևաբար՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի իրավական և փաստական հիմքերը հանդես են գալիս միասնաբար:

Նշվածը փաստվում է նաև հայցի հիմքերի՝ իրավաբանական գրականությամբ սահմանված տեսակների տարանջատմամբ: Հայցի հիմքերը կազմում են մի կողմից այն փաստական հանգամանքները, որոնք հաստատում են կողմերի միջև իրավահարաբերության առկայությունը, իսկ մյուս կողմից՝ այն հանգամանքները, որոնք հիմնավորում են պատասխանողին ուղղված պահանջը[1]: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի դեպքում հայցի հիմքերի նման տարանջատումը չի գործում, քանի որ ինքնին իրավահարաբերության առկայության փաստումը, այն է՝ գույքի իրավական կարգավիճակի որոշումը, պահանջի հիմնավորվածության հաստատման հիմք է: Նույն կերպ՝ գույքի ձեռքբերումը օրինական եկամուտներով չհիմնավորվելը հավաստող փաստերի առկայությունը ինքնին գույքը Օրենքի իմաստով որակում է որպես ապօրինի ծագում ունեցող և այդպիսի գույքի բռնագանձման հիմք: Այսինքն՝ հայցի փաստական հիմքերը չեն կարող վերացարկվել այն իրավական նորմերից, որոնք Օրենքի ուժով կիրառելի են նման փաստական հանգամանքների առկայության պայմաններում: Ուստի հաշվի առնելով այն հանգամանքը, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի պարագայում հայցի փաստական և իրավական հիմքերը առանձին հանդես գալ չեն կարող, գտնում ենք, որ տվյալ դեպքում հայցի իրավական հիմքը, ինքնուրույն վերցված, չի կարող ծառայել որպես հայցի անհատականացման միջոց:

Ինչ վերաբերում է նախադեպային որոշումներով հայցի առարկային տրված իրավական բնորոշմանը[2], ապա կարծում ենք, որ հայցվորի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման նյութաիրավական պահանջը դիտարկելով միայն որակական չափանիշի հիման վրա, այն է՝ պաշտպանության ենթակա սուբյեկտիվ իրավունքի և այդ իրավունքի պաշտպանության համար ընտրված եղանակի համատեքստում, բավարար չէ այդ հայցի անհատականացման համար:

Այսպես, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջը, լինելով ճանաչողական հայցի տարատեսակ, չի կարող անհատականացվել վերը նշված տարրերի հիման վրա, քանի որ պաշտպանության ենթակա սուբյեկտիվ իրավուն-

---

[1] Տե՛ս **Мохов А.А., Воронцова И.В., Семёнова С.Ю.** Гражданский процесс, Гражданское процессуальное Право России, учебник, М., 2017, էջ 95:

[2] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի դեկտեմբերի 12-ին թիվ 3-1696(ՎԴ) քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

քը բոլոր դեպքերում ապօրինի ծագում ունեցող գույքը օրինական շրջանառություն բերելուն միտված պետության ոչ գույքային շահն է, որի պաշտպանության եղանակը և նյութաիրավական պահանջը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջը ներկայացնելն է: Հետևաբար, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջների առարկան վերը նշված հատկանիշներով անհատականացնելը գործնականում հնարավոր չէ և չի կարող ծառայել ՀՀ գլխավոր դատախազության ներկայացրած հայցապահանջները անհատականացնելու միջոց:

Մյուս կողմից, ՀՀ վճռաբեկ դատարանը հայցի առարկայից տարբերակում է հայցի օբյեկտը՝ այն դիտարկելով առարկա, որին ուղղված է հայցի առարկայի բովանդակությունը կազմող պահանջը[1]: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի առանձնահատկությունով պայմանավորված՝ կարծում ենք, որ հայցի նյութական օբյեկտը, այն է՝ ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքը, անհրաժեշտ է դիտարկել հայցի առարկայի քանակական չափանիշ, ինչը էական նշանակություն ունի հայցի անհատականացման առումով: Հակառակ պարագայում անհարկի կսահմանափակվի իրավասու մարմնի կողմից ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջների ներկայացումը դատարան, քանի որ առանց դրանք անհատականացնելու դատարանը չի կարող որոշել իրավասու մարմնի կողմից նախկինում նույն հայցապահանջով ներկայացված հայցերի նույնության հարցը: Ուստի հայցի նյութական օբյեկտը տվյալ դեպքում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի առարկան անհատականացնող տարր է և պետք է դիտարկվի հայցի առարկայի կազմում:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումով որոշված հայցի առարկան և հայցի հիմքերի ուսումնասիրության վերջնական ամփոփման արդյունքում դատարան ներկայացվելիք հայցի առարկան կարող են չհամընկնել: Օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ հայցի առարկայի և հայցի նախնական ապահովման դիմումի առարկայի մասնակի կամ ամբողջական համընկնումը հիմք չէ հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման դիմումը մերժելու համար: Նշվածը վկայում է այն մասին, որ հաշվի են առնված այն դեպքերը, երբ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի տարբեր փուլերում հետագայում հարուցվելիք հայցի առարկան որոշակի փոփոխությունների կարող է ենթարկվել, ինչը չպետք է խոչընդոտի նաև գույքի նախնական արգելադրման հարցում:

Հաշվի առնելով հայցի հիմքերի ուսումնասիրության ընթացքը և դրա արդյունքներով անձի օրինական եկամուտներով գույքի ձեռքբերումը հիմնավորվելու կամ չհիմնավորվելու դեպքում նախապես պարզված գույքակազմի փոփոխությունները՝ օրենսդիրը չի բացառել այն դեպքերը, երբ դատարան ներկայացված հայցի առարկան չներառի այն գույքի բռնագանձման պահանջը, որի նկատմամբ նախկինում կիրառվել է հայցի նախնական ապահովում, որպիսի պայմաններում դատարանը շահագրգիռ անձի դիմումի հիման վրա կվերացնի հայցի նախնական ապահովումը: Փաստորեն, տվյալ դեպքում հայցի առարկայի չհամընկնումը պայմանավորված է ուսումնասիրության արդյունքների հիման վրա կատարված հայցի առարկայի նյութական օբյեկտի քանակական չափանիշի հնարավոր փոփոխությամբ, իսկ հայցի առարկայի որակական կողմը վարույթի տարբեր փուլերում փոփոխման չի ենթարկվում:

Հարկ ենք համարում նշել, որ հայցի անհատականացման համար որոշիչ նշանակություն կարող է ունենալ նաև հայցի սուբյեկտային շրջանակը, քանի որ իրավասու մարմինը այդպիսի պահանջ ներկայացնում է տարբեր անձանց նկատմամբ, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ նույն սուբյեկտի նկատմամբ կարող

[1] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 04. 10. 2013թ. -ին թիվ ԵԿԴ/2924/02/11 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

է ներկայացվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման տարբեր պահանջներ, ուստիև սուբյեկտային չափանիշով հայցերի տարբերակումը ևս չի կարող ունիվերսալ անհատականացման միջոց ծառայել:

Ճիշտ է, ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներով սահմանված պահանջի անհատականացման չափանիշները այլ հայցատեսակներին կարող են վերագրելի լինել, սակայն ճանաչողական հայցերի առանձնահատկության հաշվառմամբ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի տարրերը, մեր կարծիքով, կարող են հայցի անհատականացման միջոց դիտարկվել բացառապես սուբյեկտային շրջանակի և նյութական օբյեկտի՝ հայցի առարկայի քանակական չափանիշի համադրման հիման վրա:

Հետևաբար, մեր գնահատմամբ, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի անհատականացման հարցում որոշիչ նշանակություն ունի հայցի առարկայի քանակական չափանիշ հանդիսացող նյութական օբյեկտի, այն է՝ ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի հաշվառումը:

Հարկ ենք համարում նաև անդրադառնալ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի տարրերի դրսևորման առանձնահատկություններին և դրանց համատեքստում գործնականում առաջացող հիմնախնդիրներին:

Որպես կանոն՝ քաղաքացիական դատավարության կարգով քաղաքացիական գործերի քննությունը մեկնարկում է դատարան ներկայացված հայցի հիման վրա, սակայն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը չի ծագում իրավասու մարմնի կողմից ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց ներկայացնելու պահից: Խնդրո առարկա հարաբերությունների բնույթով և առանձնահատկություններով պայմանավորված՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցը ներկայացնելու պարտադիր նախապայման է համարվում Օրենքով սահմանված հայց հարուցելու հիմքերի վերհանումը: Նշված հիմքերի առկայությունը ենթակա է պարզման իրավասու մարմնի՝ ՀՀ գլխավոր դատախազության կողմից հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրությամբ, որը դիտվում է որպես ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի մինչդատական պարտադիր փուլ:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը սահմանում է հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության հասկացությունը, ըստ որի՝ այն ընթացակարգ է՝ ուղղված ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության, դրա ծավալների և շահագրգիռ անձանց շրջանակի վերաբերյալ տվյալներ ձեռք բերելուն: Ըստ Օրենքի՝ ուսումնասիրություն սկսելու հիմքերի առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պատասխանատու ստորաբաժանումը որոշում է կայացնում ուսումնասիրություն սկսելու մասին, իսկ ուսումնասիրության արդյունքները ամփոփվում են եզրակացություն կազմելով, որը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջը դատարան ներկայացնելու համար հիմք կարող է դառնալ: Նշված հիմքերը, քրեադատավարական գործընթացներից զատ, հնարավոր է պարզել և ուսումնասիրել բացառապես Օրենքով սահմանված պարտադիր ընթացակարգերի պահպանմամբ՝ իրավասու մարմնին վերապահված լիազորությունների գործադրման շրջանակներում (որպես օրինակ՝ ուսումնասիրության արդյունքների նախնական ամփոփումից հետո շահագրգիռ անձանց ծանուցման և լսված լինելու իրավունքի ապահովումը, ուսումնասիրությունը հաշտության համաձայնությամբ ավարտելու հնարավորության քննարկումը):

Կարծում ենք, որ իրավասու մարմնի ուսումնասիրության արդյունքներով մինչդատական փուլում վեր հանված հայց հարուցելու հիմքերը ներառում են նաև հայցի առիթ հանդիսացող տարբերակված փաստական հանգամանքներ:

Այսպես, դատավարագիտության մեջ սուբյեկտիվ իրավունքի կամ պահպանվող օրինական շահերի դատական պաշտպանության եղանակին դիմելու, այն է՝ հայցի իրավունքի ծագումը հաստատող փաստերը դիտվում են հայցի առիթ հան-

դիսացող հանգամանքներ[1]: Կա նաև մոտեցում, որ հայցի առիթ հանդիսացող փաստական հանգամանքները չեն ներառվում հայցի հիմքի մեջ. դրանք այն փաստերն են, որոնցից բխում է հայցի իրավունքը, և որոնք առիթ են ստեղծում տվյալ դեպքում «կիրառելու» հայցի տվյալ հիմքերը[2]: Այնուամենայնիվ, գտնում ենք, որ հայցի առիթ հանդիսացող հանգամանքները կազմում են հայցի փաստական հիմքը, քանի որ այն հանգամանքները, որոնց ուժով ենթադրյալ սուբյեկտիվ իրավունքի կրողին իրավունք է վերապահվում դիմելու դատարան, ևս ենթակա են գնահատման հայցի հիմքի հիմնավորվածության պարզման համատեքստում:

Ինչ վերաբերում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու հիմքերին, ապա դրանք ոչ միայն ներառում են գույքի ապօրինի ծագումը հավաստող բավարար փաստական տվյալները և պատասխանողի կողմից որոշակի վարքագիծ դրսևորելու փաստը, որոնք ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջ ներկայացնելու հիմք են հանդիսանում, այլ նաև ներառում են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց ներկայացնելու՝ իրավասու մարմնի լիազորության ծագման նախապայմանը: Նշված նախապայմանի առկայությունը պայմանավորված է մինչդատական փուլում գույքի ծագման հարցը պարզելուն և վարույթը ավարտելուն ուղղված գործողությունների կատարմամբ և առանց դատարան հայց ներկայացնելու այդ հարցի լուծման հնարավորության սպառմամբ:

Այսպես, ուսումնասիրության անցկացման պարտադիր փուլերից են՝ շահագրգիռ անձանց ծանուցումը, վերջիններիս՝ իրենց առարկությունները ներկայացնելու հնարավորություն ընձեռելը, ինչպես նաև ուսումնասիրության արդյունքներով հաշտության համաձայնագրի կնքմամբ ուսումնասիրությունը ավարտելու հնարավորության քննարկումը: Նշված ընթացակարգի ապահովման դեպքում մի կողմից վարույթը կարող է ավարտվել նախքան դատարան դիմելը՝ շահագրգիռ անձանց կողմից ներկայացված հիմնավոր փաստարկների և գույքի ձեռքբերման օրինականությունը հիմնավորելու դեպքում կամ հաշտության համաձայնագրի հիման վրա վիճելի գույքը կամ դրա մի մասը ՀՀ-ին փոխանցելով: Այսինքն՝ գույքի ապօրինի ծագում ունենալու բավարար հիմքերի առկայության ուսումնասիրությունը նախատեսում է ապօրինի ծագում ունեցող գույքի սեփականության իրավունքը պետությանը փոխանցելու հարցը արտադատական կարգով լուծելու կարգը, ուստի նշված հանգամանքները ևս դիտվում են հայցի առիթ հանդիսացող հանգամանքներ, որոնց բացակայության պայմաններում իրավասու մարմնի մոտ չի ծագում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց դատարան ներկայացնելու իրավունքը:

Հետևաբար, գտնում ենք, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հարուցման հիմքերը տարբերակված դրսևորում ունեն, քանի որ ներառում են նաև հայցի առիթ հանդիսացող՝ Օրենքով սահմանված առանձնահատուկ նախապայմաններ, այն է՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարցը մինչդատական փուլում լուծելու հնարավորության սպառումը հավաստող հանգամանքները: Ուստի, նշված նախապայմանները չպահապանելու դեպքում իրավասու մարմնի՝ դատարան հայց ներկայացնելու լիազորությունը չի ծագում՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով:

Անդրադառնալով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի փաստական հիմքին՝ կարող ենք արձանագրել, որ փաստական հիմքը կազմում են այն փաստական հանգամանքները, որոնք իրենց համակցության մեջ կարող են դիտվել անհրաժեշտ և բավարար՝ Օրենքի իմաստով հաստատված համարելու գույքի ապօրինի ծագումը: Սակայն կարծում ենք, որ ապօրինի ծագում ունեցող

---

[1] Տե՛ս **В. М. Гордон,** Основание иска в составе изменения исковых требований, Ярославль, 1902, էջ 237:

[2] Տե՛ս **Исаенкова Н. В.**, Иск в гражданском судопроизводстве, Москва, 2020, էջ 62:

գույքի բռնագանձման հայցի հիմքում ընկած փաստական հանգամանքների հաստատումը դեռևս բավարար չէ հայցվորի նյութահիրավական պահանջը հիմնավորված համարելու համար:

Այսպես, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու հիմքերը պարզվում և ստուգվում են իրավասու մարմնի նախաձեռնած ուսումնասիրությամբ, որը հանդիսանում է Օրենքով սահմանված մինչդատական փուլ: Իրավասու մարմինը ուսումնասիրության արդյունքներով ստացված տվյալների հիման վրա փորձում է հիմնավորել անձին պատկանող գույքի և հայտարարագրված օրինական եկամուտների էական անհամապատասխանությունը, որը, սակայն, գործի քննության ընթացքում կարող է չհաստատվել: Այսինքն՝ ուսումնասիրության արդյունքներով հայտնաբերված գույքի և օրինական եկամուտների անհամապատասխանությունը դեռևս չի հաստատում գույքի բռնագանձման պահանջը, քանի որ գործի քննության ընթացքում կարող է ապացուցվել գույքի ձեռքբերման օրինականությունը: Օրենքով ներդրվել է այն սկզբունքը, ըստ որի՝ հայցվորը պետք է ապացուցի ոչ թե գույքի ձեռքբերման անօրինականությունը, այլ գույքի ձեռքբերումը օրինական եկամուտներով չհիմնավորվելը: Ուստի հայցվորի ներկայացրած փաստերը գույքի՝ օրինական եկամուտներով հիմնավորված չլինելու վերաբերյալ հաստատվելու դեպքում օրենքի ուժով գործում է գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, իսկ պատասխանողը գործի քննության ընթացքում կարող է ապացուցել իրեն պատկանող ակտիվների օրինականությունը: Նշվածը փաստում է նաև Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասը, համաձայն որի՝ պատասխանողը կարող է հերքել գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը՝ ներկայացնելով օրինական եկամուտներով գույքի ձեռքբերումը հիմնավորող ապացույցներ:

Հետևաբար, կարող ենք եզրահանգել, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման առանձնահատկություններով պայմանավորված՝ հայցի հիմքը կազմում են ուսումնասիրության ընթացքում պարզված և պատասխանողի կողմից գույքի՝ օրինական եկամուտներով ձեռքբերումը ժխտող փաստական հանգամանքները, որոնք դեռևս բավարար չեն նյութահիրավական պահանջը հիմնավորված համարելու և գույքի բռնագանձման համար, քանի որ հայցի հիմքում դրված ժխտողական փաստերը պատասխանողի կողմից հերքվելու դեպքում պահանջը ենթակա կլինի մերժման:

Հայցի հիմքը կազմող փաստական հանգամանքները որոշելու համար էական է համարվում նաև ՀՀ իրավական համակարգում ներդրված չբացատրվող հարստացման մոդելի[1] ընտրությունը, որի համաձայն՝ ձեռք բերված գույքի արժեքի և օրինական եկամուտների էական անհամապատասխանությունը ինքնին բավարար է գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը գործադրելու համար: Ստացվում է, որ Օրենքը հայցի հիմքում ընկած փաստական հանգամանքների շարքում առանցքային է համարել գույքի՝ օրինական եկամուտներով հիմնավորված չլինելը, ինչը կարծում ենք, դեռևս չի վկայում հանցագործության հետ տվյալ գույքի ձեռքբերման թեկուզև անուղղակի կապի մասին, ինչի փաստումը կարևորվում է հանրային շահի պարզման և ինստիտուտի ներդրումը հանցավորության դեմ պայքարով պայմանավորելու համար: Այնինչ, հակառակ դեպքում կստացվի, որ անկախ հանցավոր գործունեության անուղղակի հետևանք լինելուց գույքը կհամարվի ապօրինի ծագում ունեցող, եթե գույքի սեփականատերը չկարողանա այլ հանգամանքներով պայմանավորված բավարար չափով հիմնավորել իր օրինական եկամուտների առկայությունը (ապացույցներ պահպանված չլինելը, վկաների ցուցմունքները դատարանի կողմից բավարար չհամարելը և այլն):

[1] Մանրամասն տե՛ս, Օրենքի նախագծի հիմնավորումը, կետ 60
http://www.parliament.am/draft_docs7/K-438-438-14_Himnavorum.pdf

Եվրոպական դատարանը Թոդորովը և ուրիշները ընդդեմ Բուլղարիայի գործով[1] արձանագրել է, որ յուրաքանչյուր դեպքում պետք է գնահատվի կապը գույքի բռնագանձմանը հանգեցնող ենթադրյալ հակաօրինական վարքագծի և դրա արդյունքում ստացված գույքի միջև: Կարևորվել է նաև այն հանգամանքի պարզումը, թե որքանով է հավանական, որ գույքի ձեռքբերումը կարող էր պայմանավորված լինել հանցագործության կատարմամբ, հակառակ պարագայում անձի գույքային իրավունքներին միջամտությունը կդիտարկվի անհամաչափ:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ գտնում ենք, որ հայցի հիմքում ընկած փաստական հանգամանքները չեն կարող սահմանափակվել միայն գույքի արժեքի և օրինական եկամուտների էական անհամապատասխանությունը վկայող փաստերով, այլ նաև պետք է ներառեն հանցավոր գործունեության հետ թեկուզև անուղղակի առնչության ենթադրությունները հիմնավորող փաստական տվյալներ, ինչը հիմք կտա դատարանին ենթադրելու, որ գույքի ձեռքբերումը օրինական եկամուտներով չհիմնավորվելը առավել քան հավանական է դարձնում գույքի՝ հանցավոր գործունեության արդյունքում ձեռք բերված լինելը:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները.

1. ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշման համատեքստում հայցի իրավական հիմքը ինքնուրույն դիտարկվելու դեպքում չի կարող հանդես գալ որպես ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի անհատականացման միջոց, քանի որ տվյալ հայցի փաստական և իրավական հիմքերը, ճանաչողական հայցի առանձնահատկությամբ պայմանավորված, հանդես են գալիս միասնաբար:

2. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի անհատականացման հարցում որոշիչ նշանակություն ունի հայցի առարկայի քանակական չափանիշ հանդիսացող նյութական օբյեկտի, այն է՝ ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի նույնականացումը, որը անհրաժեշտ է դիտարկել հայցի առարկան անհատականացնող տարր:

3. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հարուցման հիմքերը ներառում են հայցի առիթ հանդիսացող՝ Օրենքով տարբերակված պայմաններ, այն է՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարցը մինչդատական փուլում լուծելու հնարավորության սպառումը հավաստող հանգամանքները:

4. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հիմքը կազմում են հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության ընթացքում պարզված և պատասխանողի կողմից գույքի՝ օրինական եկամուտներով ձեռքբերումը ժխտող փաստական հանգամանքները, որոնք դեռևս բավարար չեն հայցվորի նյութաիրավական պահանջը հիմնավորված համարելու և գույքի բռնագանձման համար, քանի որ հայցի հիմքում դրված ժխտողական փաստերը պատասխանողի կողմից հերքվելու դեպքում պահանջը ենթակա կլինի մերժման:

5. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հիմքում ընկած փաստական հանգամանքները՝ որպես հայցվորի նյութաիրավական պահանջը հիմնավորող փաստեր, չեն կարող սահմանափակվել միայն գույքի արժեքի և օրինական եկամուտների էական անհամապատասխանությունը վկայող փաստերով, այլ նաև պետք է ներառեն հանցավոր գործունեության հետ թեկուզև անուղղակի առնչության ենթադրությունները հիմնավորող փաստական տվյալներ, ինչը հիմք կտա դատարանին ենթադրելու, որ գույքի ձեռքբերումը օրինական եկամուտներով չհիմնավորվելը ներկայացված ապացույցների գնահատմամբ առավել հավանական է դարձնում գույքի՝ հանցավոր գործունեության արդյունքում ձեռք բերված լինելը:

[1] Տե՛ս Todorov and others v. Bulgaria, ECHR, 13 July 2021:

ПРОБЛЕМЫ ЭЛЕМЕНТОВ ИСКА О КОНФИСКАЦИИ ИМУЩЕСТВА НЕЗАКОННОГО ПРОИСХОЖДЕНИЯ В ГРАЖДАНСКОМ СУДОПРОИЗВОДСТВЕ РА

Мери Хачатрян
Аспирант кафедры гражданского процессуального права ЕГУ

Элементы иска, обусловленные особенностями производства по взысканию имущества незаконного происхождения, имеют дифференцированное проявление. На основании анализа прецедентных решений Кассационного суда РА в данной статье представлены критерии индивидуализации иска о конфискации имущества незаконного происхождения в контексте практического значения индивидуализации иска. Освещены особенности иска о конфискации имущества незаконного происхождения и способы дифференциации. Правильное определение фактических обстоятельств иска имеет особо важное значение в контексте определения фактов, подлежащих доказыванию и оценки обоснованности иска. В статье также рассмотрены основания для предъявления иска и лежащие в его основе фактические обстоятельства, на основании которых были изучены и выявлены их различия. Подчеркнуто, что в основу иска необходимо и важно включать не только факты не оправдывающие приобретение имущества при наличии достаточного законного дохода, но и факты, которые устанавливают связь между приобретением такого имущества и преступной деятельностью, принимая во внимание цель Закона и охраняемый интерес. Учитывая тот факт, что предъявление подобных исков является новинкой в судебной практике, сделанные в статье выводы и заключения могут быть ориентиром для формирования правоприменительной практики.

THE ISSUES OF THE ELEMENTS OF THE CLAIM FOR CONFISCATION OF PROPERTY OF ILLICIT ORIGIN IN THE CIVIL PROCEEDINGS OF RA

Meri Khachatryan
PhD Student at the YSU Chair of Civil Procedure

Due to the specifics of the proceedings for confiscation of property of illicit origin, the elements of the claim presented in such proceedings have a differentiated manifestation. In the context of the practical significance, the criteria for the individualization of the claim of confiscation of property of illegal origin were presented in the context of the precedent decisions of the Court of Cassation RA. The article highlighted the peculiarities of the claim for confiscation of property of illegal origin and the means of its distinctions. The precise determination of the scope of the factual circumstances of the claim is of a great importance in the context of determining the burden of proof and evaluating the justification of the claim. In the article, the grounds for initiating a lawsuit and the factual circumstances underlying the claim were studied, based on which their differences were highlighted. It was emphasized that within the

basis of a claim it is not only important to include the facts not justifying the acquisition of property with sufficient legal income, but also the facts establishing the link between the acquisition of such property and criminal activity, considering the aim pursued by the Law. Considering the fact that such claims are a novelty in judicial practice, the conclusions made in the article can be a guideline for law enforcement practice.

Բանալի բառեր - *ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց, հայցի հիմք, հայցի առարկա, հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն, իրավասու մարմին, in rem հայց, հայցի անհատականացման միջոցներ*
Ключевые слова: *иск о конфискации имущества незаконного происхождения, основание иска, предмет иска, расследование оснований для возбуждения иска, уполномоченный орган, вещный иск, способы индивидуализации иска*
Keywords: *claim for confiscation of property of illicit origin, basis of a claim, object of a claim, investigation of the grounds for initiating a claim, the authorized body, an in rem claim, means of individualization of a claim*